



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԻՆԱՆ ՄԻՆԱՆԵԱՆ
ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

Համայն հայության Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր եւ արժանաւոր զաւակիդ:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր աստուածաշնորհ կեանքի ընթացքը զարդարուած է ազգային-եկեղեցական անդաստանում բերած գովարժան վաստակով: Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ուրախ ենք հաստատելու, որ Դուք երկար տարիներ լծուած էք ազգաշէն եւ եկեղեցաշէն ծառայութեան՝ Ձեր շնորհներն ու կարողութիւնները նուիրումով մատուցելով քրիստոսասէր մեր ժողովրդին եւ մեր Սուրբ Եկեղեցուն:

Աստուածահաճոյ Ձեր սպասաւորութիւնը Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուել է Հայկական բարեգործական ընդհանուր միութեան ծիրից ներս: Երկար տարիներ լինելով Կենտրոնական վարչութեան անդամ՝ նպաստ էք բերել արդիւնաւորելու ազգանուէր այս հաստատութեան առաքելութիւնը, որը մէկ դարից աւելի երախտարժան իր մշակներով մեծ ծառայութիւններ է բերում ողջ հայութեան կեանքում, զօրակից լինում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեանը: Այսօր Դուք՝ որպէս ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան փոխատենապետ, շարունակում էք ջանքեր ներդնել Միութեան գործունէութեան նորոգ արգասաւորման համար:

Ուրախալի է, որ Դուք պատրաստակամ յանձնառութիւններով աջակից էք ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմին եւ գովարժան բարերարութիւններով պայծառութիւն էք հաւելում հայ համայնքի հոգեւոր-եկեղեցական կեանքին: Մեծապէս գնահատելի է տիրախնամ թեմի առաջնորդանիստ Սրբոց

Ղեկնողեանց Մայր Տաճարի կառուցման նուիրական գործին Ձեր ներդրումը, աղօթավայրի շինության համար կատարած նշանակալի նուիրատուութիւնը: Դուք իշխանական սրտաբոլխ նուիրատուութիւն կատարեցիք ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Երկրորդական վարժարանի շէնքի համար: Լինելով Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետը՝ ազնիւ ջանքեր էք ներդրել վարժարանի գործունէութեան լաւագոյնս կազմակերպման, կրթական մակարդակի բարձրացման, մանուկ ու պատանի հայորդեաց հայեցի եւ քրիստոնէական կրթութեան ու դաստիարակութեան համար: Գովելի է նաեւ հայրենի երկրին զօրակից լինելու նախանձախնդրութեամբ Ձեր նիւթական մեծ նուիրաբերութիւնը Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսարանին:

Յարգարժան պարոն Սինանեան, Ձեր կեանքի ողջ ընթացքին Դուք դրսևորել էք որդիական անկեղծ սէր ու ծառայութեան պատրաստակամութիւն՝ հանդէպ հարազատ ժողովուրդը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ Մենք ուրախ ենք, ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնդակով շնորհել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ գօրավիզ ու աջակից լինի եւ Իր Սուրբ Աջի բարեկանամ հովանոյ ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգևելով քաջատողջ երկար կեանք, նորանոր ձեռքբերումներ եւ ազգօգուտ ու եկեղեցաշէն գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յամբ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27-ն նոյեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 937